«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 60 500 456, +374 98 546 497
welcome@aybschool.am
www.aybschool.am

Արձանագրություն
№ ASBT06-2210-C (2909)

«Այբ կրթական հանգույց» հիմնադրամի 6-րդ գումարման հոգաբարձուների խորհրդի նիստի

Ամսաթիվ՝	29 սեպտեմբերի 2022 թ.
Անցկացման վայր՝	«Այբ» դպրոց, ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11/ Zoom հարթակ
Նիստի սկիզբ՝	09:30

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Հոգաբարձուների խորհրդի (ՀԽ) անդամներ՝
Ռուբեն Հարությունյան - ՀԽ նախագահ, (առցանց),
Աշոտ Մկրտչյան, (առցանց),
Արտավազդ Մինասյան, (առցանց),
Դավիթ Փախչանյան, (առկա),
Լիլիթ Մինասյան, (առկա),
Ռիմմա Անանյան, (առկա),
Իրինա Գեյկո, (առկա),
Սարգիս Բաղալյան,(առկա),
Վասկեն Յակուբյան, (առցանց),

Նիստին չեն մասնակցել՝
Արսեն Գալստյան,
Տիգրան Հարությունյան:

Լիլիթ Մինասյանը չի մասնակցել 7, 10 և 11 հարցերի քննարկմանը:
Արտավազդ Մինասյանը չի մասնակցել 10 և 11 հարցերի քննարկմանը:

Նիստին մասնակցել են հոգաբարձուների խորհրդի տասնմեկ անդամից ինը, ինչն ապահովում է որոշումների կայացման համար անհրաժեշտ քվորումը:
Առանց ձայնի իրավունքի նիստին մասնակցում էին.
Դավիթ Սահակյան (գործադիր տնօրեն), (առկա),
Հայկ Պողոսյան (Գործառնական տնօրեն), (առկա), (մասնակցել է հարց 4-ին,)
Նելլի Բալայան (Ֆինանսների կառավարիչ), (առկա), (մասնակցել է հարց 4-ին,)
Վազգեն Գաբրիելյան (ՖաբԼաբի ղեկավար), (առկա), (մասնակցել է հարց 8-ին)
Նիստի քարտուղար ընտրվեց Սիրանուշ Սուքիասյանը, (առկա):

Հարց 1. Օրակարգի հաստատում: Հարցեր, որոնք այս օրակարգում ընգրկված չեն եղել: Որոշում՝ հարց 1 *Հաստատել ՀԽ-ի նիստի 2022 թվականի սեպտեմբերի 29-ի օրակարգը:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 2. Նախորդ նիստից անցած ժամանակահատվածում դպրոցի աշխատանքների մասին հակիրճ տեղեկություններ, այդ թվում PDP-ներ:
Հարց 3. ՀԽ-ի հանձնարարությունների կատարման հաշվետվություն/ 2021 թվականի սեպտեմբերից սկսած/:
Որոշում՝ հարց 3 *Որոշվեց Հավելված 2-1-ի 2, 11, 13, 15, 19, 31, 33, 34 կետերը համարել կատարված:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 4. 2022-2023 ուսումնական տարվա բյուջեի հաստատում և ֆինանսական հաշվետվություն:
Որոշում՝ հարց 4 *Որոշվեց.* *1. Հաստատել 2021-2022 ուսումնական տարվա բյուջեի կատարման հաշվետվությունը:* *2. Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա բյուջեն (ըստ հավելված 3-ի) որպես աշխատանքային՝ դեկտեմբեր ամսին վերանայելու պայմանով:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 5. Դպրոցի տարածքում գործընկերոջ ներդրմամդ ընդհանուր օգտագործման պայմաններով բացօթյա ֆուտբոլի դաշտի «Չեմպիոն» ՀԿ-ի առաջարկության քննարկում և հաստատում:
Որոշում՝ հարց 5: *Որոշվեց հաստատել տարածքում գործընկերոջ ներդրմամդ ընդհանուր օգտագործման պայմաններով բացօթյա ֆուտբոլի դաշտի «Չեմպիոն» ՀԿ-ի առաջարկությունը ըստ Հավելված 4-ի և հանձնարարել Դ. Սհակյանին մեկնարկել պայմանագրերի կնքման գործընթացը: Պարտադիր պահանջ է, որ արհեստական խոտածածկի կատեգորիան լինի առնվազն Euro 4 կամ Euro 5 կարգի, ինչպես նաև պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում Դպրոցն ունենա գործընկերոջ գույքի գնման առաջնահերթության իրավունք:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 6. Լրացուցիչ ընդունելության արդյունքների ամփոփում և «քաղած դասեր»:
Հարց 7. Ընդունելության կարգի փոփոխության հաստատում:
Որոշում՝ հարց 7: *Որոշվեց հաստատել Ընդունելության կարգի փոփոխություններն ըստ Հավելված 6-ի:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 8. Հակիրճ տեղեկություն ՖաբԼաբի հայեցակարգի, աշխատանքների մասին՝ նվաճումները, ծախսերը և այլն:
Հարց 9. Դպրոցի կամպուսի զարգացման ճանապարհային քարտեզը և ընթացիկ իրավիճակի հաշվետվությունը:
Հարց 10. Նախնական զինվորական պատրաստության ծրագրի հայեցակարգի վերանայում:
Որոշում՝ հարց 10 *Որոշվեց*

1. ստեղծել ՆԶՊ զարգացման հանձնաժողով, որի անդամներն են՝ Դավիթ Փախչանյան (ղեկավար), Դավիթ Սահակյան, ՆԶՊ ուսուցիչ Հրաչյա Պետրոսյանց: Հրավիրել հանձնաժողովի աշխատանքներին Մանուկ Հերգնյանին և շրջանավարտների ակումբի մեկ անդամի: *2. Հաջորդ նիստին զեկուցել հանձնաժողովի աշխատանքների մասին:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 11. Հաջորդ նիստերի օրվա հաստատում:
Որոշում հարց 11 *Որոշվեց ՀԽ-ի հաջորդ տարվա նիստերը հրավիրել դեկտեմբերի 8-ին, փետրվարի 23-ին, մայիսի 4-ին, հուլիսի 6-ին և սեպտեմբերի 28-ին:* Որոշումը կայացված է միաձայն:
Կետ 12 ՀԽ-ի հաջորդ նիստին առաջարկվող հարցեր: Բոլոր հարցերը ներկայացնել դեկտեմբերի 8-ի նիստին, եթե այլ բան չի նշված հանձնարարության վերաբերյալ:
Կետ 13. Նիստի ավարտ Հանդիպումն ավարտվեց ժամը 12:50-ին:

ՀԽ անդամներ

Աշոտ Մկրտչյան _____

Արտավազդ Մինասյան _____

Դավիթ Փախչանյան _____

Լիլիթ Մինասյան _____

Ռիմմա Անանյան _____

Իրինա Գեյկո _____

Սարգիս Բաղալյան _____

Վասկեն Յակուբյան _____

ՀԽ նախագահ

Ռուբեն Հարությունյան _____

Նիստի քարտուղար

Սիրանուշ Սուքիասյան _____